ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 151

*ներթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքը (Սուրենավան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*

*(Արարատ համայնքի (Սուրենավան բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

*ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքը (Սուրենավան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-7 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի (Սուրենավան բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 03-086-0253-0009 կադաստրային ծածկագրով 0.4997 հա մակերեսով հողամասից 0.11 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /կորիզավոր/ հողեր | 03-086-0253-0009 կադաստրային ծածկագրով 0.4997 հա մակերեսով հողամասից 0.11 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված պահանջը (կցվում է):

4. Արարատ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Սուրենավան բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի (Սուրենավան բնակավայրը) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ե.Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Լ.Առաքելյան |

Երևան, «13» «մայիսի» 2025 թ.